ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ։

ՀԱԼԼԷ. ուս. Ճ. Բոզիեան.—«Էմմանուէլ Կանտ» ստացանք և կը տպենք։

ՈՒՐՄԻ. Եր. Ցովասափեան.—Ստացել ենք Ձեր «Դարա-դաղ» յօդուածը և լոյս կտեսնի միւս համարում։

ՄՈՍԿՈՒԱ. Ա. Կ.—Ձեր «Դէպի Մաքենեաց վանք» յօդուածը ուշ հասաւ խմբագրութեան՝ խմբագրի երկարաւոր բացակայութեան պատճառով. ուստի և մեաց միւս համարին։

ԲԱԳՈՒ. Մ. Բարխ.—«Հնոց և Նորոց» նոյն պատճառով լոյս կտեսնի միւս անգամ։

ՄԱՐԲՈՒՐԳ. ուս. Մ. Խոսրիկեան.—Ստացանք Ձեր «Խեստացոց կամ Խեսիանների երևան գալը» հետաքրքրական յօդուածը և կտպենք միւս համարում։ Մենք շատ ուրախ ենք, որ Եւրոպայի հայ ուսանողներն առհասարակ պատրաստակամութիւն են ցոյց տալիս մեր հանդիսին աշխատակցելու։

ՀԱԼԼԷ. ուս. Ն. Տէր Ցովհաննիսեան.—Ստացանք Իսկոյնի «Մէկ շախպարտի» պատկերը և կտպենք առաջիկայում։

ԱԽԱԼՑԽԱ. Ճ. Բայբուրդցի.—Ուղարկածդ և ուղարկելի «Դիւանի» նիւթերի համար յայտնում ենք մեր խորին շնորհակալութիւնը։

ԹԻՖԼԻՍ. օր. Գլորա-Անահիտ. —Կեօրների «Ցովսէփ Հայդրիխ» պատկերի Ձեր թարգմանութիւնը ուշ հասաւ մեր ձեռքը, ուստի և տպագրութիւնը մեաց միւս անգամին։

ՓԱՐԻԶ. Ն. Ցարոյ.—Կարող էք ուղարկել Թիֆլիս։ Թղթակցութիւնը մեզ չէ հասել։

Կ. ՊՕԼԻՍ. Քննասէր.—«Առաքեալներէն մինչև Լուսաւորիչ» ստացանք, որով լրանում է Հայ. եկեղեցու առաջին վեց դարերի քննական պատմութիւնը։ Յօդուածը կտպուի

միւս համարում։ Իսկ ամբողջը մի հատորով կհրատարակենք առանձին։

ԲԱԳՈՒ. Արշակ.—Այո՛, Ձեր ուղարկած ոտանաւորների մէջ երևում է քանքարի նշոյլ, բայց խորհուրդ ենք տալիս առ այժմ միայն մշակել այն։

ԱԽԱԼՑԽԱ. Ե. Մ.—Ձեր անձնականի վերաբերելով ուղարկածդ յօդուածները չենք կարող տպել։

ԳԱՆՁԱԿ. Ա. Ֆ. Շ.—Ոտանաւորը գրաբար լինելով՝ անյարմար է «Լուսոյս»-ին։

ԲԱԳՈՒ. Վ. Գ.—Ձեր նամակը օրաթերթի նիւթ լինելով չկարողացանք հրատարակել։

ՄՈՍԿՈՒԱ. Հ. Խ.—Բանաստեղծութիւններ սովորաբար չենք տպում, ուստի և Ձեր ուղարկածները մեծին անտիպ։

ՇՈՒԼԱՒԻՐ. Գ. Բ.—«Սասունցի Դաւիթ» ընդարձակ պոէման չենք կարող տպել, որովհետև խմբագրութեան մէջ ներկայումս այնքան տպագրելի նիւթ կայ դիզուած, որ հազիւ թէ շուտով հերթ հասնի մի նոր երկար գրուածքին։

ԲԱԳՈՒ. Ն. Ֆ.—«Դիւանի» է գիրքն ուղարկեցինք Ձեզ։ Յօդուածը շուտ պիտի ուղարկէք որ № 5 ին հասնի։ Շնորհակալութիւն նորից կապսպարենք։

Խմբագիր-Հրատարակիչ ԳԻՒՏ Ա. ՌԱՀ. ԱՂԱՆԵԱՆՑ